Հաստատված է
«ԱԿՏԻՆԱ ԿԱՊԻՏԱԼ» ՍՊԸ
միակ մասնակցի թիվ Ո-25-005 որոշմամբ

«ԱԿՏԻՆԱ ԿԱՊԻՏԱԼ»
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ
ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ
ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՆԴԱՄԻ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

# ՍԱԿԱԳՆԵՐ

ԵՐԵՎԱՆ 2025

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Սույն փաստաթղթով սահմանված սակագները (այսուհետ՝ «Սակագներ») գանձվում են ՀՀ դրամով, բացառությամբ ՀՀ ռեզիդենտ չհամարվող անձանց կողմից վճարման դեպքերի, որոնք կարող են իրականացվել նաև ազատ փոխարկելի արտարժույթով կամ ռուսական ռուբլիով:

1.2. Հաշվետիրոջ հաշիվներում առկա՝ պետական կամ համայնքային, ինչպես նաև ՀՀ ԿԲ սեփականությունը հանդիսացող արժեթղթերի պահպանման Սակագին չի գանձվում: Անվանատերն անդպիսի սեփականատերերի մասին ՀԿԴ-ին տեղեկացնում է Սի-Բի-Էյ-Նեթ ցանցով՝ մինչև հաշվետու ամսվան հաջորդող աշխատանքային օրվա ավարտը:

1.3. Եթե ծառայության դիմաց վճարման ենթակա գումարը հաշվարկվում է ծառայության հիմնական չափորոշիչի ցուցանիշի նկատմամբ տոկոսով, և այդ չափարաշիչն արտահայտված է արտարժույթով, ցուցանիշի արժեքը վերահաշվարկվում է տվյալ օրվա դրությամբ ՀՀ ԿԲ կողմից հրապարակված՝ ՀՀ դրամի նկատմամբ փոխարժեքով:

1.4. Ընկերությունը կասեցնում է ծառայությունների մատուցումն իր միջնորդությամբ պահառության/ենթապահառության պայմանագիր կնքած հաշվետերերին, եթե նրանք ունեն Սակագների վճարման պարտավորության երեք ամսից ավելի կետանց: Ծառայությունների մատուցումը վերսկսվում է Սակագների ամբողջական վճարումից հետո: Կասեցումից հետո ծառայությունների մատուցման վերսկսման դեպքում անցումային սակագների հաշվարկն իրականացվում է ՀԿԴ «Սակագների մասին» կանոններով սահմանված կարգով: Հաշվետերը կարող է ՀԿԴ հանդեպ իր ունեցած պարտավորությունների մասին տեղեկատվություն ստանալ ՀԿԴ պաշտոնական կայքից:

1.5. Ընկերությունը կարող է կատարել Սակագների միակողմանի փոփոխություններ, որոնք ուժի մեջ են մտնում Ընկերության կայքում դրանք հրապարակելու միջոցով Հաշվետերերին դրանց մասին տեղեկացնելուց հետո՝ Ընկերության սահմանած ժամկետում, սակայն ոչ շուտ, քան ՀԿԴ-ի կողմից հաստատվելուց հետո:

1.6. Սակագները ներառում են ՀԿԴ-ին վճարվելիք սակագները:

1.7. Սույն փաստաթղթով չկարգավորված հարցերը կարգավորվում են ՀԿԴ «Սակագների մասին» կանոններով:

2. ՊԱՀԱՌՈՒԹՅԱՆ ՍԱԿԱԳՆԵՐ

2.1. Սեփականատերերի արժեթղթերի հաշիվներում առկա արժեթղթերի (բացառությամբ օտարերկրյա պահառուի միջոցով հաշվառվող արժեթղթերի) պահպանման հետ կապված ծառայություններ

2.1.1. Արժեթղթերի (փայերի) հաշվի բացում, փոփոխություն, պահպանում և փակում

| Ծառայության անվանումը | Միավորը | Սակագինը (ամսական) |
|---|---|---|
| Արժեթղթերի հաշվի բացում | Արժեթղթերի հաշիվ | Անվճար |
| Արժեթղթերի հաշվում ներառված տեղեկությունների փոփոխության գրանցում | | |
| Հաշվում առկա արժեթղթերի (բացառությամբ օտարերկրյա պահառուի միջոցով հաշվառվող արժեղթերի) պահպանում (Այս ծառայության դիմաց սակագնի հաշվարկումը սկսվում է Հաշվի օպերատորի կողմից հաշվետիրոջ հաշվի բացման/վերաբացման պահից) | Յուրաքանչյուր օրվա վերջին հաշվետիրոջ հաշվում առկա արժեթղթերի (բացառությամբ ՀՀ կարգավորվող շուկայում առեւտրին թույլատրված, ինչպես նաեւ պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող կամ ՀՀ Կենտրոնական բանկին սեփականության իրավունքով պատկանող արժեթղթերի կամ | ՀԿԴ-ի կողմից տրյալ ամսվա համար հաշվարկված տվյալի և դրա 60%-ի հանրագումար |

| | | |
|---|---|---|
| | հրապարակային ֆոնդի փայերի մնացորդների անվանական (փայերի դեպքում՝ հաշվարկային) արժեք | |
| Արժեթղթերի հաշվի փակում | | Անվճար |

2.2.Կարգավորվող շուկայից դուրս արժեթղթերի փոխանցմամբ պայմանավորված ծառայություններ (Փոխանցման սակագինը չի գանձվում այն դեպքերում, երբ աժեթղթեր փոխանցող/ստացող կողմ է հանդիսանում ՀՀ կենտրոնական բանկը)

2.2.1. Բաժնետոմսերի (փայերի) հասարակ փոխանցում (ներառյալ՝ «Ազատ առաքում՝ համաձայնությամբ» սկզբունքով) ցանկացած հիմքով, բացառությամբ 2.2.3, 2.2.4 եւ 2.2.7 կետերով սահմանված դեպքերի (վճարում է փոխանցող/շահագրոզիռ կողմը ): Ներառում է առուվաճառքի, նվիրատվության, ժառանգության, պետական սեփականություն հանդիսացող արժեթղթերի մասնավորեցման, դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճռի կամ վճռի հիման վրա (երբ տվյալ վճռով պարտապանը Դեպոզիտարիան չէ), ինչպես նաեւ ցանկացած այլ հիմքով արժեթղթերի փոխանցում արժեթղթերի մեկ հաշվից մյուսին:

| Ծառայության անվանումը | Միավորը | Սակագինը |
|---|---|---|
| Բաժնետոմսերի (փայերի) փոխանցում, (ներառյալ՝ ազատ առաքումը՝ համաձայնությամբ) | Գործարքի առարկա հանդիսացող արժեթղթերի ընդհանուր անվանական (փայերի | մինչեւ 3 000 000 000 ՀՀ դրամը՝ 0,1%, նվազագույնը՝ 3 000 ՀՀ դրամ |

| | | |
|---|---|---|
| | դեպքում՝ հաշվարկային) արժեք/ վճարում է փոխանցող կողմը, իսկ Կանոններով սահմանված դեպքերում եթե հանձնարարականը ներկայացնում է միայն շահագրողի կողմը, ապա վճարում է շահագրգիռ կողմը | 3 000 000 000 ՀՀ դրամից ավել՝ 3 000 000 ՀՀ դրամ |

2.2.2. Պարտատոմսերի հասարակ փոխանցում (ներառյալ՝ «Ազատ առաքում՝ համաձայնությամբ» սկզբունքով) ցանկացած հիմքով, բացառությամբ 2.2.3, 2.2.4 եւ 2.2.7 կետերով սահմանված դեպքերի (վճարում է փոխանցող/շահագրոգիռ կողմը: Ներառում է առուվաճառքի, նվիրատվության, ժառանգության, պետական սեփականություն հանդիսացող արժեթղթերի մասնավորեցման, դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճռի կամ վճռի հիման վրա (երբ տվյալ վճռով պարտապանը Դեպոզիտարիան չէ), ինչպես նաեւ ցանկացած այլ հիմքով արժեթղթերի փոխանցում արժեթղթերի մեկ հաշվից մյուսին:

| Ծառայության անվանումը | Միավորը | Սակագինը |
|---|---|---|
| Պարտատոմսերի փոխանցում, (ներառյալ՝ ազատ առաքումը՝ համաձայնությամբ) | Գործարքի առարկա հանդիսացող արժեթղթերի ընդհանուր անվանական արժեք/ | մինչեւ 4 000 000 000 ՀՀ դրամը՝ 0,01%, նվազագույնը՝ 3 000 ՀՀ դրամ |

| | | |
|---|---|---|
| | վճարում է փոխանցող կողմը, իսկ Կանոններով սահմանված դեպքերում եթե հանձնարարականը ներկայացնում է միայն շահագրռգիռ կողմը, ապա վճարում է շահագրգիռ կողմը | 4 000 000 000 ՀՀ դրամից ավել՝ 400 000 ՀՀ դրամ |

2.2.3. Ռեպո կամ հակադարձ ռեպո գործարքների կնքման արդյունքում արժեթղթերի փոխանցում մեկ հաշվից մյուսին

| Ծառայության անվանումը | Միավորը | Սակագինը |
|---|---|---|
| Ռեպո կամ հակադարձ ռեպո գործարքների կնքման արդյունքում արժեթղթերի փոխանցում | Հանձնարարագիր/վճարումը իրականացնում է յուրաքանչյուր կողմը | 5 500 ՀՀ դրամ |

2.2.4. Պորտֆելի փոխանցում՝ մեկ հաշվի օպերատորի մոտ բացված հաշվետիրոջ հաշվից այլ հաշվի օպերատորի մոտ բացված տվյալ հաշվետիրոջ հաշվին՝ արժեթղթերի հաշվում առկա ամբողջ մնացորդի փոխանցմամբ

| Ծառայության անվանումը | Միավորը | Սակագինը |
|---|---|---|

| | | |
|---|---|---|
| Պորտֆելի փոխանցում | Հանձնարարագիր/վճարումը իրականացնում է յուրաքանչյուր կողմը | 6 000 ՀՀ դրամ |

2.2.5. Բաժնետոմսերի (փայերի) փոխանցում «Առաքում վճարման դիմաց» սկզբունքով ցանկացած հիմքով

| Ծառայության անվանումը | Միավորը | Սակագինը |
|---|---|---|
| Բաժնետոմսերի (փայերի) փոխանցում «Առաքում վճարման դիմաց» սկզբունքով ցանկացած հիմքով | Գործարքի առարկա հանդիսացող արժեթղթերի ընդհանուր անվանական (փայերի դեպքում՝ հաշվարկային) արժեք/ վճարում է յուրաքանչյուր կողմը | մինչեւ 2 000 000 000 ՀՀ դրամը՝ 0,015%, նվազագույնը՝ 3 000 ՀՀ դրամ |
| | | 2 000 000 000 ՀՀ դրամից ավել՝ 3 000 000 ՀՀ դրամ |

2.2.6. Պարտատոմսերի փոխանցում «Առաքում վճարման դիմաց» սկզբունքով ցանկացած հիմքով

| Ծառայության անվանումը | Միավորը | Սակագինը |
| --- | --- | --- |
| Պարտատոմսերի փոխանցում «Առաքում վճարման դիմաց» սկզբունքով ցանկացած հիմքով | Գործարքի առարկա հանդիսացող արժեթղթերի ընդհանուր անվանական արժեք/ վճարում է յուրաքանչյուր կողմը | մինչեւ 2 000 000 000 ՀՀ դրամը՝ 0,015%, նվազագույնը՝ 3 000 ՀՀ դրամ |
| | | 2 000 000 000 ՀՀ դրամից ավել՝ 300 000 ՀՀ դրամ |

2.2.7. Արժեթղթերի գրավի արտադատական կարգով իրացման արդյունքում արժեթղթերի փոխանցում

| Ծառայության անվանումը | Միավորը | Սակագինը |
| --- | --- | --- |
| Արժեթղթերի գրավի արտադատական կարգով իրացման արդյունքում | Իրացվող արժեթղթերի ընդհանուր անվանական (փայերի | մինչեւ 140 000 000 ՀՀ դրամը՝ 0,3%, նվազագույնը՝ 5 000 ՀՀ դրամ |

| | | |
|---|---|---|
| արժեթղթերի փոխանցում | դեպքում՝ հաշվարկային) արժեք/ վճարումը իրականացնում է գրավառուն | |
| | | 140 000 000 ՀՀ դրամից ավել՝ 420 000 ՀՀ դրամ |

2.3. Արժեթղթերի գրավի իրավունքի, արժեթղթերի սառեցման, առեւտրային արգելադրման, ինչպես նաեւ ձայնի իրավունքի սահմանափակման գրանցման հետ կապված ծառայություններ

2.3.1. Հաշվետիրոջ կամ նրա լիազորված ներկայացուցչի հանձնարարագրով տվյալ հաշվետիրոջ անունով բացված հաշվում արժեթղթերի գրավի իրավունքի գրանցում

| Ծառայության անվանումը | Միավորը | Սակագինը |
|---|---|---|
| Բաժնետոմսերի (փայերի) գրավի իրավունքի գրանցում | Գրավի առարկա հանդիսացող արժեթղթերի ընդհանուր անվանական (փայերի դեպքում՝ հաշվարկային) արժեք/ | մինչեւ 3 000 000 000 ՀՀ դրամը՝ 0,1%, նվազագույնը՝ 5 000 ՀՀ դրամ, իսկ եթե գրավառուն օտարերկրյա/միջազգային կազմակերպություն է՝ |

| | | |
|---|---|---|
| | վճարում է գրավատուն/շահագրգիռ կողմը | նվազագույնը՝ 10 000 ՀՀ դրամ |
| | | 3 000 000 000 ՀՀ դրամից ավել՝ 3 000 000 ՀՀ դրամ |
| Պարտատոմսերի գրավի իրավունքի գրանցում | Գրավի առարկա հանդիսացող արժեթղթերի ընդհանուր անվանական արժեք/ վճարում է գրավատուն/շահագրգիռ կողմը | մինչեւ 3 000 000 000 ՀՀ դրամը՝ 0,02%, նվազագույնը՝ 3 000 ՀՀ դրամ, իսկ եթե գրավառուն օտարերկրյա/միջազգային կազմակերպություն է՝ նվազագույնը՝ 10 000 ՀՀ դրամ |
| | | 3 000 000 000 ՀՀ դրամից ավել՝ 600 000 ՀՀ դրամ |

2.3.1.

2.3.2. Հաշվետիրոջ կամ նրա լիազորված ներկայացուցչի հանձնարարականի հիման վրա արժեթղթերի կամ արժեթղթերի հաշվի սառեցում

| Ծառայության անվանումը | Միավորը | Սակագինը |
|---|---|---|
| Սառեցում | Սառեցված արժեթղթերի ընդհանուր անվանական (փայերի դեպքում՝ հաշվարկային) արժեք/ վճարում է հաշվետերը | մինչեւ 3 000 000 000 ՀՀ դրամը՝ 0,1%, նվազագույնը՝ 3 000 ՀՀ դրամ |
| | | 3 000 000 000 ՀՀ դրամից ավել՝ 3 000 000 ՀՀ դրամ |

2.3.3. Կարգավորվող շուկայում կնքված գործարքների արդյունքում արժեթղթերի առեւտրային արգելադրում

| Ծառայության անվանումը | Սակագինը |
| --- | --- |
| Արժեթղթերի առեւտրային արգելադրում | Անվճար |

2.3.4. Բաժնետիրական ընկերության ընդհանուր ժողովում քվեարկելու իրավունքի ժամանակավոր սահմանափակում արգելադրված բաժնետոմսերի համար

| Ծառայության անվանումը | Միավորը | Սակագինը |
| --- | --- | --- |
| Բաժնետիրական ընկերության ընդհանուր ժողովում քվեարկելու իրավունքի ժամանակավոր սահմանափակում | Քվեարկելու իրավունքը սահմանափակված արժեթղթերի ընդհանուր անվանական արժեք | 0,05%, նվազագույնը՝ 10 000 ՀՀ դրամ |

2.3.5. Գրավի, սառեցման, առեւտրային արգելադրման եւ այլ սահմանափակումների դադարեցում

| Ծառայության անվանումը | Միավորը | Սակագինը |
| --- | --- | --- |

| | | |
|---|---|---|
| Գրավի, սառեցման, առեւտրային արգելադրման եւ այլ սահմանափակումների դադարեցում | Գրավադրված, սառեցված, առեւտրային նպատակով արգելադրված եւ այլ սահմանափակումների ենթարկված արժեթղթերի ընդհանուր (փայերի դեպքում՝ հաշվարկային) անվանական արժեք | Անվճար |

2.4.Արժեթղթերի հաշվից տեղեկությունների տրամադրում

2.4.1. Հաշվետիրոջ հարցման հիման վրա տվյալ հաշվի օպերատորի մոտ բացված (վերաբացված) արժեթղթերի հաշվից (այդ թվում՝ ռեեստրից) քաղվածքի կամ արժեթղթերի հաշվով կատարված գործառնությունների (այդ թվում՝ արժեթղթերի շարժի) մասին տեղեկանքի տրամադրում (առանց հիմքերի)

| Ծառայության անվանումը | Միավորը | Սակագինը |
|---|---|---|
| Արժեթղթերի հաշվից քաղվածքի տրամադրում՝ հաշվում առկա միայն մեկ դասի արժեթղթի մասով (ռեեստրից քաղվածք)) | Քաղվածք | 500 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ) |

| | | |
|---|---|---|
| Արժեթղթերի հաշվի մնացորդի վերաբերյալ հաշվետվության տրամադրում | Հաշվետվություն | 500 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ) |
| Արժեթղթերի հաշվով կատարված գործառնությունների (այդ թվում՝ արժեթղթերի շարժի) մասին տեղեկանքի տրամադրում | Տեղեկանք | 2 000 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ) |
| Հաշվետվություն արժեթղթերի հաշվում գրանցված գրավի իրավունքների վերաբերյալ | Հաշվետվություն | 5 000 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ) |

2.4.2. Հաշվետիրոջ հարցման հիման վրա տվյալ հաշվի օպերատորի մոտ բացված (վերաբացված) արժեթղթերի հաշվից այլ տեղեկությունների վերաբերյալ ռեեստրից կամ արժեթղթերի հաշվից տեղեկանքի տրամադրում (հիմքերով)

| Ծառայության անվանումը | Միավորը | Սակագինը |
|---|---|---|

| | | |
|---|---|---|
| Տեղեկանքի տրամադրում (Էլեկտրոնային եղանակով) | Տեղեկանք | 5 000 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ) |
| Տեղեկանքի տրամադրում (թղթային եղանակով) | Տեղեկանք | 8 000 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ) |
| Տեղեկանքի տրամադրում անգլերենով կամ ռուսերենով | Տեղեկանք | Հայերենի համար սահմանված սակագնի կրկնապատիկը |